ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ
NEW GENERATION
HUMANITARIAN NGO

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՍՏ ԵՎ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱՑԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՂ ԱԴՎՈԿԱՑԻՈՆ ԾԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Հայաստան, Երևան
2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՍՏ ԵՎ ՏՐԱՆՍ* ԱՆՁԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱՑԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՂ ԱԴՎՈԿԱՑԻՈՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Փաստաթուղթը կազմվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Բյուջետային անալիզը որոշումների կայացման գործընթացում թիրախ խմբերի ներգրավվածության համար» ծրագրի շրջանակներում Եվրասիական տարածաշրջանային կոնսորցիումի մաս կազմող Վնասի նվազեցման եվրասիական ասոցիացիայի (EHRA) դրամաշնորհի շրջանակներում, քաղաքացիական հասարակության ցանցերի Ռոբերտ Կարրի հիմնադրամի (RCF) ֆոնդերի հաշվին :

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, և պարտադիր չէ, որ այն արտացոլի Վնասի նվազեցման եվրասիական ասոցիացիայի (EHRA) տեսակետները: Փաստաթղթի հեղինակները պատասխանատվություն չեն կրում երրորդ անձանց կողմից սույն զեկույցում ներկայացված տվյալների օգտագործման և մեկնաբանման համար:

Հեղինակ.
Անահիտ Հարությունյան

Դիտարկեց՝ Սերգեյ Գաբրիլյան
Հմայակ Ավետիսյան

Դիզայնը՝ Լևոն Չիլինգարյան

© «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն
Զեկույցը կամ դրանից հատվածներ օգտագործելիս պարտադիր է հղում տալ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին:

Բոլոր իրավունքները պահպանված են ©NGNGO 2021թ.

Հայաստան, Երևան
2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱՑԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՂ ԱԴՎՈԿԱՑԻՈՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ 6

ԱՌԱՋԱՐԿ 1 7

ԱՌԱՋԱՐԿ 2 8

ԱՌԱՋԱՐԿ 3 9

ԱՌԱՋԱՐԿ 4 10

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 12

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԹՆՕ	ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԱՐԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐ
ԿՍԿ	ԿՈՄԵՐՑԻՈՆ ՍԵՌԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱՆԱՅՔ
ՀԿ	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՁԻԱՀ	ՁԵՌՔԲԵՐՈՎԻ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ
ՄԻԱՎ	ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍ
ՏՍՏ	ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՏՂԱՄԱՐԴ
ՄՀՀ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի, ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ ԵՎ ՄԱԼԱՐԻԱՅԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

2021 թ.-ին իրականացվեց SUS և տրանս* անձանց տրամադրվող սոցիալական և առողջապահական ծառայությունների համար Հայաստանի ազգային բյուջեի ֆինանսական բացերի վերլուծություն՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի ծրագրային և ֆինանսական գնահատմանը, կապված SUS և տրանս* անձանց տրամադրվող առողջապահական և սոցիալական ծառայությունների հետ:

Վերլուծության ընթացքում գնահատվել են միջազգային փորձը, առկա ֆինանսական հատկացումները, վեր են հանվել ֆինանսական բացերը, ինչպես նաև կատարվել առաջարկություններ SUS և տրանս* անձանց շրջանում կանխարգելման ծրագրերի ֆինանսական կայունության ապահովման համար:

Վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են առկա փաստաթղթերը, հավաքագրվել է տեղեկատվություն ֆինանսական ծախսերի վերաբերյալ, ինչպես նաև իրականացվել են խորացված հարցազրույցներ փորձագետների հետ:

Առկա փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են Հայաստանի Հանրապետությունում 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրով նախատեսված միջոցառումները թիրախ խմբերի շրջանում և այդ միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվող արդյունքները, իրականացված միջոցառումների փաստացի արդյունքները և երկրում ՄԻԱՎ վարակով պայմանավորված համաճարակաբանական կոնտեքստը:

Հավաքագրվել է տեղեկատվություն, ինչպես պետական բյուջեով, այնպես էլ այլ աղբյուրներից թիրախային խմբերին ուղղված միջոցառումների մասով կատարված ֆինանսական ծախսերի վերաբերյալ:

Վերլուծության ընթացքում իրականացվել են նաև խորացված հարցազրույցներ փորձագետների հետ թիրախային խմբերին ծառայությունների տրամադրման հետ կապված գործնական հարցերի վերաբերյալ:

Վերլուծության ընթացքում հավաքագրված առկա տեղեկատվությունը ծրագրային միջոցառումների վերաբերյալ օրացուցային տարով էր ներկայացված, իսկ դրանց իրականացման համար ֆինանսական միջոցների հատկացումները՝ ֆիսկալ տարով, ինչը որոշակիորեն սահմանափակում էր մի շարք կտրվածքներով վերլուծության համեմատությունների իրականացումը:

Բացի դրանից՝ մի շարք միջոցառումների կտրվածքով հավաքագրվող տվյալները ագրեգացված չեն, ինչը ևս խոչընդոտ է հանդիսացել դիտարկելու տարբեր միջոցառումների գծով SUS-ների և տրանս* անձանց

համար ծախսված ֆինանսական միջոցները, օրինակ նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելումը:

Քանի որ Հայաստանի Հանրապետությունում 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիրը ավարտվում է 2021թ.-ին միջոցառումների շարունակականությունը ապահովելու համար անհրաժեշտ է մշակել և հաստատել նոր Ազգային ծրագիրը հաջորդող տարիների համար:

Գործող ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրով պետական բյուջեից ֆինանսավորում կանխարգելման ծրագրերի իրականացման համար նախատեսված չի եղել, դրանց ֆինանսավորումը պլանավորված է եղել իրականացնել այլ աղբյուրների հաշվին:

Փաստացի այդ միջոցառումները հիմնականում իրականացվել են Գլոբալ հիմնադրամի և այլ միջազգային դոնորների միջոցներով: Անհրաժեշտ է դիտարկել կանխարգելման ծրագրերի ֆինանսական հետագա ապահովումը՝ հաշվի առնելով, որ Գլոբալ հիմնադրամի ֆինանսավորումն ավարտվում է 2021թ.-ին, ինչպես նաև կարևոր է հաշվի առնել երկրի տնտեսական վիճակը, ֆինանսական հնարավորությունները:

Խոցելի խմբերի ներկայացուցիչները կանխարգելման ծառայություններ ստանում են հասարակական կազմակերպություններում: Տրամադրվող ծառայությունների ընդլայնման նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել և դիտարկել առաջնային օղակի միջոցով կանխարգելման ծառայությունների տրամադրումը խոցելի խմբերի ներկայացուցիչներին:

Սոցիալական ծրագրեր՝ ուղղված խոցելի խմբերին, չեն իրականացվում: Դա պայմանավորված չէ օրենսդրական խոչընդոտներով, այլ առաջարկի բացակայությամբ: Այս առումով խորհուրդ է տրվում ուսումնասիրել խոցելի խմբերի համար սոցիալական ծրագրերի կարիքները և հասանելիությունը, և արդյունքում մշակել առաջարկներ, ծրագրեր՝ ուղղված խոցելի խմբերի կարիքներին:

Ելնելով արդեն իսկ կատարված վերլուծության առաջարկներից՝ կազմվել է ֆինանսական բացերը հասցեավորող ադվոկացիոն ճանապարհային քարտեզ, որը նկարագրում է վերլուծության մեջ սահմանված առաջարկներին հասնելու քայլերը, միջոցառումները, ժամանակացույցը և ակնկալվող արդյունքները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱՑԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՂ ԱԴՎՈԿԱՑԻՈՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

SUS և տրանս* անձանց տրամադրվող սոցիալական և առողջապահական ծառայությունների համար Հայաստանի ազգային բյուջեի ֆինանսական բացերի վերլուծության ընթացքում առանձնացվել են հետևյալ առաջարկությունները:

1 Հայաստանի Հանրապետությունում 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիրը ավարտվում է 2021թ.-ին: Միջոցառումների շարունակականությունը ապահովելու համար անհրաժեշտ է մշակել և հաստատել նոր Ազգային ծրագիրը հաջորդ տարիների համար:

2 Գործող ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրով պետական ֆինանսավորում կանխարգելման ծրագրերի իրականացման համար նախատեսված չի եղել, դրանք հիմնականում իրականացվել են Գլոբալ հիմնադրամի և այլ միջազգային դոնորների միջոցներով: Անհրաժեշտ է դիտարկել կանխարգելման ծրագրերի ֆինանսական հետագա ապահովումը՝ հաշվի առնելով, որ Գլոբալ հիմնադրամի ֆինանսավորումն ավարտվում է 2021թ.-ին, ինչպես նաև կարևոր է հաշվի առնել երկրի տնտեսական վիճակը, ֆինանսական հնարավորությունները:

3 Խոցելի խմբերի ներկայացուցիչները կանխարգելման ծառայություններ ստանում են հասարակական կազմակերպություններում: Տրամադրվող ծառայությունների ընդլայնման նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել և դիտարկել առաջնային օղակի միջոցով կանխարգելման ծառայությունների տրամադրումը խոցելի խմբերի ներկայացուցիչներին:

4 Սոցիալական ծրագրեր՝ ուղղված խոցելի խմբերին, չեն իրականացվում: Դա պայմանավորված չէ օրենսդրական խոչընդոտներով, այլ առաջարկի բացակայությամբ: Այս առումով խորհուրդ է տրվում ուսումնասիրել խոցելի խմբերի համար սոցիալական ծրագրերի կարիքները և հասանելիությունը, և արդյունքում մշակել առաջարկներ, ծրագրեր՝ ուղղված խոցելի խմբերի կարիքներին:

1 ԱՌԱՋԱՐԿ

Հայաստանի Հանրապետությունում 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիրը ավարտվում է 2021թ.-ին: Միջոցառումների շարունակականությունը ապահովելու համար անհրաժեշտ է մշակել և հաստատել նոր Ազգային ծրագիրը հաջորդ տարիների համար:

Ներկայում սկսվել է հաջորդ տարիների համար նոր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման Ազգային ծրագրի մշակումը:

Բազմակողմ ներգրավվածություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ապահովել խոցելի խմբերի ներկայացուցիչների կամ այդ խմբերի հետ աշխատող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ընդգրկվածությունը նոր Ազգային ծրագրի մշակման գործընթացում:

Հասարակական կազմակերպություններին անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ ապահովելու խոցելի խմբերի ներկայացուցիչներին ընդգրկումը այդ պրոցեսներում: Մասնավորապես ներկայում պետք է հաստատավի Միջոցառումները համակարգող հանձնաժողովի (ՄՀՀ) նոր կազմը, որտեղ արդեն իսկ ընդգրկվել են տարբեր ՀԿ-ների նոր ներկայացուցիչներ: Սա ինքնին արդեն կարևոր քայլ է ապահովելու բազմակողմ ընդգրկվածություն այս գործընթացում:

Միջոցառումների ժամանակացույցը անհրաժեշտ է ճշտել ՄՀՀ քարտուղարության հետ:

Ակնկալվող արդյունք: Հայաստանի Հանրապետությունում 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի մշակման և հաստատման գործընթացում խոցելի խմբերի ներկայացուցիչների ակտիվ ներգրավվածություն:

2 ԱՌԱՋԱՐԿ

Գործող ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրով պետական ֆինանսավորում կանխարգելման ծրագրերի իրականացման համար նախատեսված չի եղել, դրանք հիմնականում իրականացվել են Գլոբալ հիմնադրամի և այլ միջազգային դոնորների միջոցներով:

Անհրաժեշտ է դիտարկել կանխարգելման ծրագրերի ֆինանսական հետագա ապահովումը՝ հաշվի առնելով, որ Գլոբալ հիմնադրամի ֆինանսավորումն ավարտվում է 2021թ.-ին, ինչպես նաև կարևոր է հաշվի առնել երկրի տնտեսական վիճակը, ֆինանսական հնարավորությունները:

ՄՀՀ նոր կազմում ընդգրկված հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ՄԻԱՎ-ով ապրող և տուբերկուլոզի հանրույթի ներկայացուցիչները անհրաժեշտ է ադվոկացիոն քայլեր ձեռարկեն՝ ուղղված կանխարգելման ծրագրերի ֆինանսական կայունության ապահովմանը, մասնավորապես պետական ֆինանսավորման հատկացմանը:

Անհրաժեշտ է քննարկել սոցիալական պատվերի ներդրումը, ինչպես նաև բացի Առողջապահության նախարարությունից այլ նախարարությունների կողմից հնարավոր կանխարգելիչ ծրագրերի իրականացման համար ֆինանսկաան հատկացումները:

Քանի որ նոր ՄՀՀ կազմը հաստատվում է 2 տարով, ադվոկացիոն քայլերն անհրաժեշտ է իրականացնել առաջիկա երկու տարում:

Ակնկալվող արդյունք: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրերի պետական ֆինանսական միջոցների մասնակի ապահովում:

3 ԱՌԱՋԱՐԿ

Խոցելի խմբերի ներկայացուցիչները կանխարգելման ծառայություններ ստանում են հասարակական կազմակերպություններում:

Տրամադրվող ծառայությունների ընդլայնման նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել և դիտարկել առաջնային օղակի միջոցով կանխարգելման ծառայությունների տրամադրումը խոցելի խմբերի ներկայացուցիչներին:

Ներկայում առողջապահական առաջնային օղակը սկսել է իրականացնել ՄԻԱՎ վարակի հայտնաբերման վերաբերյալ արագ թեստեր, այդ թվում խոցելի խմբերի ներկայացուցիչների համար:

Հասարակական կազմակերպությունների հենքի վրա անհրաժեշտ է ստեղծել անկախ մոնիտորինգային խմբեր, որոնք նախապես պայմանավորվածությամբ Առողջապահության նախարարության հետ, ժամանակ առ ժամանակ կիրականացնեն մոնիտորինգային այցեր առաջնային օղակ, խոցելի խմբերի ներկայացուցիչների համար տրամադրվող ծառայությունների կարիքների գնահատման, բացերի հայտնաբերման և դրանց բարձրաձայնման նպատակով:

Սա հնարավորություն կտա ստեղծել համագործակցություն պետական և հասարակական սեկտորի միջև՝ ապահովելով տրամադրվող ծառայությունների հասանելիությունը կոնկրետ խոցելի խմբերի ներկայացուցիչների համար: Նման համայնքահեն մոնիտորինգային խմբերը կարող են ձևավորվել նաև ՄՀՀ-ին կից, ինչև նաև հնարավորություն կտա ամսեկան կտրվածքով խմբի կատարված աշխատանքների վերլուծություն ներկայացնել ՄՀՀ:

Քանի որ նոր ՄՀՀ կազմը հաստատվում է 2 տարով, ադվոկացիոն քայլերն անհրաժեշտ է իրականացնել առաջիկա երկու տարում:

Ակնկալվող արդյունք:
ՄՀՀ կից համայնքահեն մոնիտորինգային խմբերի ձևավորում: Խմբի հաշվետվությունների հիման վրա առաջարկների մշակում՝ ուղղված խոցելի խմբերի ներկայացուցիչների համար որակյալ և կարիքներին համապատասխան ծառայությունների տրամադրման ապահովմանը:

4 ԱՌԱՋԱՐԿ

Սոցիալական ծրագրեր՝ ուղղված խոցելի խմբերին, չեն իրականացվում: Դա պայմանավորված չէ օրենսդրական խոչընդոտներով, այլև առաջարկի բացակայությամբ: Այս առումով խորհուրդ է տրվում ուսումնասիրել խոցելի խմբերի համար սոցիալական ծրագրերի կարիքները և հասանելիությունը, և արդյունքում մշակել առաջարկներ, ծրագրեր՝ ուղղված խոցելի խմբերի կարիքներին:

Ուսումնասիրել խոցելի խմբերի համար սոցիալական ծրագրերի կարիքները:

Պարբերաբար մոնիտորինգի ենթարկել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հայտարարվող ծրագրերը:

Պարզել՝ ինչ ծրագրեր են իրականացվում: Մշակել խոցելի խմբերի կարիքներին ուղղված առաջարկներ, ներկայացնել ծարգրային առաջարկներ: Հաշվի առնելով, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչը ընդգրկված է ՄՀՀ կազմում, ՄՀՀ նիստերի ընթացքում բարձրաձայնել և քննարկել նման առաջարկներ հնարավորությունը:

Միջոցառումների ժամանակացույցը՝ ընթացիկ:

Ակնկալվող արդյունք:
Սոցիալական ծրագրերի կարիքների գնահատում: Նոր ծրագրային առաջարկների մշակում և ներկայացում:

+374 60478989
+374 55478980

NewGenerationNGO@gmail.com
www.ngngo.net

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՍՏ ԵՎ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱՑԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՂ ԱԴՎՈԿԱՑԻՈՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

© 2021. Զեկույցը հրապարակվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպության կողմից:
© 2021. Նկարազարդումը՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի:

Հայաստան, Երևան
2021թ.